

636

U-38

24 SEP 2010

636
Մ-38

ԶՈՈ-ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հաստատված է ՀԽՍՀ Մարտմու-
ճրանային Գործադիր Կոմիտեյի հա-
խազահուրքյան 1938 թ. մարտի 9-ի
նիստով



Նոր-Բալյազեի արգարծկումի սպարան

1 9 3 8

26 JUN 2013

21.445

Գլավլիտի քիզոր
Ե- 859
Տիրած 450 որին.



16655-58

«Անասնապահության գործը պե՞տ է իրենց ձեռքն առնեն վաղը կուտակցությունը, մեք բույսը աշխատողները՝ կուտակցականները և անկուտակցականները, նկատի ունենալով, վաղ անասնապահության պրոբլեմն այժմ նույնպիսի առաջնահերթ պրոբլեմ է, վարպիտին երբեք՝ արդեն հաջողությամբ լուծված հացահատիկի պրոբլեմը»։ (Ի. ՍՏԱԼԻՆ)

1938 ԹՎԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶՈՈԱՆԱՍՆԱԲՈՒ- ԺԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Սոցիալիստական անասնապահության հետագա զարգացման, նրա քանակական և Վորակական ցուցանիշների ապահովման, ապրիտնալ ձերակրման, խնամքի, կաթի Վերամշակման և բարձրորակ կաթնամթերքների ստանալու, հիվանդությունները կանխելու և նրանց դեմ պայքարելու նպատակով բոլոր կոլանտապրանքային ֆերմաներում անշեղորեն կիրառել հետևյալ գոտանասնարուժական կանոնները։

1. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԶՄԵՌՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ԱՆՅԿԱՑՈՒՄԸ

1. Նոր կառուցվելիք գոմերի տեղերի ընտ-

բությունը կատարվում է հողը ամենի թույլտվու-
թյամբ հատուկ հանձնաժողովի կողմից:

2. Դոմաշինարարությունը կատարել հող
ժողկոմտաի կողմից հաստատված նախագծով: Դո-
մաշիններին սարքավորումը կատարելը ըստ նա-
խագծի և շրջանային ավագ գոտեխնիկի ու ա-
վագ անասնաբուծի ցուցմունքներով: Դոմաշինա-
րարությունն ավարտելուց հետո, վերջինս կ'ետք
և ընդունվի հատուկ հանձնաժողովի կողմից, վո-
րից հետո միայն կարելի չե այդպիսին ոգտա-
գործել:

3. Արդիել կողմնակի, բնակելի և այլն շեն-
քերի կառուցումն այն տերիտորիայի վրա, վորը
հատկացված է գոմաշինարարության և նրա սպա-
սարկող անտեսական շենքերի համար:

4. Անասունները լրիվ տեղավորելու նպա-
տակով նոր հանրային ձևով կառուցված գոմերը
չբավարարելու դեպքում, թույլատրվում է այլ
գոմերի ոգտագործումը միմիայն նախորդ վերա-
նորոգելուց և ավտանանումը կատարելուց հետո:

5. Ծինը ընդունելու համար յուրաքան-
չյուր ֆերմայում ունենալ հատուկ բաժանմունք
(ծնարան) Ծննդաբանները ծինն սկսելուց առաջ
յենթարկել հիմնական մաքրման և ավտանանման,
բոլոր ծննդաբաններում կատարել սպիտակեցում,
խիկ անասունների յուրաքանչյուր ծնից հետո

(ծնի վաղը) ծնաբանում կատարել տխտահա-
նում:

6. Նախքան մսուրային պահպանման անց-
նելը, 20 որ առաջ ավարտել բոլոր շենքերի վե-
րանորոգումը, ախտահանել և տաքացնել, այն ե՞.
(պատերի սվաղումը, կտուրների ծածկումը, պա-
տուհանների աղակիների զցումը և այլն):

7. Հիվանդ ու կառկածիկ անասունները
մեկուսացնելու և նրանց բուժելու համար ունե-
նալ հատուկ մեկուսարաններ: Մեկուսարանները
պետք է լինեն գոմերից, ճանապարհներից, ջրե-
րից և բնակելի շենքերից հեռու վոչ պակաս 300
մետր, մեկուսարանը պետք է կառուցել այնպիսի
տեղ, վորը տարվա ընթացքում քամիների ուղ-
ղությունը լինի գոմերից դեպի մեկուսարան:

8. Բոլոր անասնագոմերը պետք է կահա-
վորվի մսուրով, հորթերի վանդակներով, ոգափո-
խության խողովակներով, կապերով և անհրա-
ժեշտ անասնապահական գույքով, այն ե՞ գույլե-
րով, բահերով, յեղաններով, խողանակներով, քե-
րիչներով, ապտեչկաներով, ջերմաչափերով, լվա-
ցարաններով, սրբիչներով, զոգնոցներով, նասիլ-
կաներով և այլն:

9. Դոմերում պետք է լինեն մեղատար խո-
զովակներ, վորոնցով մեղը դուրս թափվի գոմե-
րից պատրաստված հատուկ միզամբարները:

10. Յուրաքանչյուր կոլտնտեսութիւն պետք է ունենա գոմաղբահորեր, ուր պետք է կուտակվի և պահպանվի ամբողջ գոմաղբը:

11. Նախքան մսուրային շրջանին անցնելը բոլոր տեսակի անասուններին յենթարկել զոռանասնաբուժական ստուգման:

ա) Թույլ և նիհար անասուններին առանձնացնել և ուժեղացնել նրանց կերակրումն ու խրչնամբը:

բ) Մշակի հիվանդութիւնն ունեցող անասունները (եկզիմաքոս-մկնատում) առանձնացնել առանձին շենքերում, կանոնավորելով նրանց կերակրումն ու բուժումը:

գ) Բոլոր անասնապահական կոլտնտէքներում անասուններին յենթարկել անասնաբուժական քննութեան, տուբերկուլյոզ և բրյուցէլյոզ (վարակիչ վիժում) և խլախտ (սապ) հիվանդութիւնների նկատմամբ: Հայտնաբերված հիվանդ անասուններին անմիջապէս առանձնացնել, վորոնց նկատմամբ խստորեն կիրառել զոռանասնաբուժական պարտադիր միջոցառումները:

դ. Պարտադիր կարգով բոլոր կոլտնտեսութիւններում—գոմերից, բնակելի շենքերից, ճանապարհներից և հոսող ջրերից 300 մետր հեռավորութեան վրա ունենալ անասնազերծմանոց համաձայն անասնաբուժների պահանջի:

12. Անասունները զոմերում դասավորելու քննարկում կատարել հետևյալ խմբակավորումները՝

ա) խոշոր յեղջուրավոր անասունների նշկատմամբ՝ արտադրողների խմբակ, կովեր-յերիւնների խմբակ, 1—2 տարեկան եզ մատղաշների, 1—2 տարեկան վորձ մատղաշների և մինչև մեկ տարեկան մատղաշների խմբակ, անպայման 6 ամսական հասակից առանձնացնել եզերը վորջերից:

Մանր յեղջուրավոր անասունների նկատմամբ խմբակների (առանձնացնելով ցեղականը տեղականից) ծածկված շիշակների հետ եզ մատղաշներն առանձին խմբակների:

գ) Խոզերի նկատմամբ՝ վարազներին առանձին վանդակներում, մայրերին առանձին վանդակներում, 4—9 ամսական եզ մատղաշների և 4—9 ամսական վորց մատղաշներն առանձին վանդակներում, յուրաքանչյուր 4—6 գլուխ և 2—4 ամսական եզ և վորց խոճկորներին առանձին վանդակներում և մինչև 2 ամսական խոճկորներին 10 գլխին մեկ վանդակ:

դ) Զիւրի նկատմամբ, բանոց ձիւրի, հովաւակների և զամբիկների խմբեր և մատղաշներ խմբեր:

13. Առանասնաբուժական վերանայման կա-

պակցութեամբ կատարել բանտիրովկա համարա-
կալում և խոտանում: Բոլոր տեսակի մետիւ և
տոհմային անասունների ամորգատումը կատարե-
հատուկ զոռանասնաբուժական հանձնաժողովի
միջոցով, խստիվ արգելելով ցեղական նշանակու-
թյուն ունեցող անասունների ամորգատումը:

14. Սոռոր ցեղական և մետիւ անասուննե-
րին հատկացնել լավ կառուցված գոմեր, նրանց
ապասարկումը հանձնել փորձված և հմուտ անաս-
նապահներին, ապահովելով նրանց կերակրումը
որիվ չափով և բարձրորակ կերերով:

15. Բոլոր անասնագոմերի մուտքի մետ ու-
նենալ անալոյման հատուկ արկղներ ախտահանիչ
նյութերով, վտուքերը ախտահանելու համար:

16. Բոլոր գյուղերում և յայլաղներում ա-
նասնաբուժի ցուցմունքով հատուկ տեղերում կա-
ռուցել մորթման հրապարակներ, խստիվ կերպով
արգելել անասունների մորթը գոմերում և այլ
վայրերում: Մսի ոգտագործումը կատարել միմի-
այն անասնաբուժի թուլյալուժյամբ:

17. Տնտեսութեան մեջ նոր ստացված անա-
սունները յենթարկվում են կարանտինայի վոչ-
պակաս 15 օրից, իսկ ձիերն և խոզերն 21 օրից:
Կարանտինայի համար հատկացվում և հատուկ
քննիչ և հատուկ արտոմասեր: Կարանտինայում
պահված մամանակամիջոցում անասունները յեն-

թարկվում են անասնաբուժական ստուգման, այն-
ձէ ձիերը յենթարկվում են մուլիինիզացիայի, խո-
շոր յեղջուրավոր անասունները տուբերկուլիզա-
ցիայի, վոչխարներին, խոզերին և խոշոր յեղջու-
րավոր անասուններին բրյուցելյոզի դեմ:

18. Կարանտինայի ժամկետը վերջանալուց
և անասնաբուժական ստուգումից հետո հիվան-
դութեան բացակայութեան դեպքում նոր անա-
սուններին կարելի յե խառնել ընդհանուր նախ-
քին, կարանտինայի մեջ գտնվող անասունները
ապասարկման համար պետք և առանձնացնել հա-
տուկ սպասարկող անձնակազմ, առանձին ջրերու-
տեղ և ինվենտար:

19. Այն անձինք, վորոնք սպասարկում են
կարանտինայում գտնվող անասուններին, իրա-
վունք չունեն մտնելու տնտեսութեան անասնա-
գոմերը և անասնակերի պահեստներ:

20. Անասուններին գյուղի շրջակայքից գուր-
բերելու դեպքում (շուկա, տոնավաճառ, ցուցա-
հանդես և այլն) կոլտնտվարչութեանը, կոլտնտե-
սականները և մենատնտեսները պարտավոր են
անասնաբուժից վերցնել վկայական տվյալ տնտե-
սութեան կամ վայրի վարակիչ հիվանդութեան-
ներից ապահով լինելու մասին:

21. Կոլտնտեսութեաններում, կոլտնտիւ-
մաներում, կոլտնտեսականների և մենատնտե-

ների անասունների մեջ միանշաններով հիվան-
դության յերեվալու, կամ մի քանի անասուններին
հանկարծակի անկման դեպքում, հիշյալ անասու-
թյունների ղեկավարները պարտավոր են անմի-
ջապես կանչել անասնաբուծին, հիվանդության
բնույթը վորոշելու (զիազնոզ) և միջոցներ ձեռք
առնելու համար: Հիվանդ կենդանին անմիջապես
առանձնացնել, նորից ուղարկել մեկուսարան: Հի-
վանդ կենդանու տեղն անպայման ախտահանել-
ազրը և ցամաքանայրել և չափած միացորդները
թաղել հողում:

22. Ստակած անասունների ղեակներն ան-
միջապես տեղափոխել անասնագերեզմանոց: Վիժ-
վածքները՝ պտուղի ընկերքն և հորթերի ղեակ-
ները զրվում են առանձին տեղ, մինչև անասնա-
բուծի գալը, դիահատում կատարելը:

23. Դիակների փոխադրման համար ունենալ
հատուկ նասիլկաներ, կամ սայլեր թիթեղապատ,
նասիլկան կամ սայլը յուրաքանչյուր ոգտագոր-
ծումից հետո ախտահանել:

24. Այն վայրերում, վորտեղ կան վոչխար-
ների քոս հիվանդություն, դարնանը և աշնանը
կատարել հակաքոսային կրկնակի լողացում, լո-
ղացման յենթարկել նաև հոտի շներին:

25. Տնտեսության մեջ նոր մուտք գործած
բոլոր շներին պահել կտրանտինայի տակ 15 օր:

և կատարել ճիճվաթափում, վոչխարների դոմերում
շների մնալը չի թույլատրվում:

26. Խլախտ (սապով) կասկածելի. ձիերին
հաշտաբերելուց անմիջապես ուղարկել խլախտ-
յին անտեսություն, համաձայն անասնաբուծի
պահանջի:

27. Բոլոր անասնապահական ֆերմաները
պետք է ունենան դեղարկղներ, դեղորայքի դո-
ժածման կանոններով:

2. ԿԱԳՐԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Ստուգել անասնապահության բնապավառում
աշխատող բոլոր կադրերը և կատարել համապա-
տասխան ամրացում, ստուգված, գործին նվիր-
ված և փորձված աշխատողներին:

1. Անասունները ձմեռվա ընթացքում կերով
ապահովելու նպատակով ըստ կոլտնտեսություն-
ների շրջանային գոտաբնօրնայի կողմից կազմվում
է կերի բալանա: Կերի բալանաները պետք է հա-
տատվեն կոլտնտեսության վարչության և ընդ-
հանուր ժողովների կողմից: Ըստ կերի բալանա-
բոլոր տեսակի կերերը համապատասխան ախտով
հանձնվում է ֆերմայի վարիչին և բրիգադիրնե-
ջին, վորոնք պատասխանատու յեն այդ կերի
պահպանման և ուսցիոնալ ոգտագործման համար:

2. Անասունները ջրելու համար յուրաքան-

չյուր կողմնադուրժումն պետք է ունենա սարքավորված ջրելու տեղ:

3. Վերպես կանոն ըլլոր տեսակի հղի անասունները հղիութեան վերջին որերը պետք է ջրվին գոմում, գոմի ջերմաստիճանն ունեցող ջրով (12—15-ից) վոչ պակաս):

4. Բոլոր կողմնափերմաներում կազմակերպել պայքար կորուստների դեմ և ձնհալակել հաճախող հային ըստ տեսակի միջոցառումներն ապահովելով գուլքի պահպանումը:

5. Յեննելով տեղի պայմաններից, յուրաքանչյուր ֆերմայում զոռպերսոնալի կողմից մշտադաշին շրջանի համար մշակվում է ներքին կարգապահութեան և աշխատանքի կանոններ, հաստատված ֆերմայի արտադրական խորհրդակցութեան կողմից:

Արգելել բանող ձիերի տեղավորումը նույն գոմում, վորտեղ տեղավորված են հղի զամբիկները: Անասնաշենքերը պետք է պահպանել մաքուր, գոմաղբը սահմանված ժամկետին գուրքերել գոմից, ստուգել ողանքների նորմալ աշխատանքը և անասունների կանգնելու տեղը փրել նոր ցամքար:

6. Գոմերում պահպանել նորմալ ջերմաստիճան, խոզանոցներում (10—12-ի⁰), հորթանոցներում 13—16-ի, ծննդատներում 15—17⁰ ցամաքային:

7. Առանց ֆերմայի վարիչի, գործունիքի և անասնաբուժի թույլատվութեան արգելել կողմնակի մարդկանց մուտքը գոմերում:

8. Բոլոր տեսակի հղի անասուններին ծննդից 15—20 որ առաջ տեղափոխել ծնարան, ապահովելով նրանց կերակրումը լավորակ կերքով: Խստիվ արգելել հղի անասուններին սխլոսացած կերով կերակրելը, սառն ջրով ջրելը:

9. Հղի անասունների խնամքն ու կերակրումը հանձնարարել փորձված և վստահելի անասնապահներին: Կտրականապես արգելվում է կեսդանիների վարակիչ հիվանդութեաններով անապահով վայրերից և անասնաթոռաներից կերելի ներմուծումը, առանց անասնաբուժի թույլտվութեան:

10. Արգելվում է անասնակիրերը պահել մարդկային զուգարանների և միջամբարների մոտ և անասնաշենքերում:

11. Արգելվում է անասուններին ջրել Կեղտոտ և չհոսող ջրերով:

3. ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ՍՃԵՑՈՒՄՆ ՈՒ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Ծինը ընդունում է փորձված և գործը տիրապետող հմուտ անասնապահը, կիրառելով պահանջվելիք զոռգիդինական կանոնները:

2. Վիժուկների դեպքում ցամքաղբ ըստ

տեսակի արտաթորումներով պետք է անմիջապես այրել կամ թաղել հողում, իսկ այն վայրը, վորտեղ տեղի յե ունեցել վիժումը, անհրաժեշտ է ախտահանել կրեոլինի լուծույթով կամ թարմ մաշած կրով:

3. Վիժած անասունները անմիջապես պետք է փոխադրել ընդհանուր ծննդարանից-մեկուսաբան:

4. Ծննդարաններում սահմանել 24 ժամյա հերթապահություն:

5. Ծնից անմիջապես հետո պետք է հեռացվի և խորը թաղվի սրբանքը, (խստիվ արգելվում է կերակրումը շներին, խոզերին և թռչուններին սրբանքը:

6. Հղի անասունների նկատմամբ սահմանել հատուկ հսկողություն, թույլ չտալով նրանց անց ու զարժը սառած և ցեխոտ հանապարհներով:

7. Հղի անասունները գոմից դուրս ու ներքերերը պիտի կատարվի մաս մաս, վորպեսզի դեռան մոտ չստեղծվի կուտակում և հրուհներ:

8. Ծնից 1—2 ամիս առաջ հղի կովերի կիթը պետք է աստիճանաբար չլաղարեցվի:

9. Նորածին հորթերը տեղափոխվում են առանձին վանդակներում և կլետկաներում:

ա) Տուբերկուլոզ և բրյուցելոզ հիվանդու-

թյուններով տառապող կովերի ծինն ընդունվում է առանձին ծննդարաններում, այդպիսի կովերից ստացված հորթը կերակրվում է ձեռքից (առողջ կովի կաթով), հուշն ժամանակամիջոցում ծնած առողջ կով չլինելու դեպքում թույլատրվում է հիվանդ կովի հորթերին կերակրել իրենց մոր կաթով: Խմով մրմիայն առաջին 10 օրվա ընթացքում:

10. Նորածին մարուկների ծնելու առաջին 30 օրվա ընթացքում տեղավորել մոր հետ առանձին բաժանմունքում (գենիկում):

11. Նորածին գառները առաջին 6—10 օրում պահվում են խմբովին կերակրող մայրերի հետ միասին:

12. Խոճկոորները պահվում են առանձին արկղում և թողնվում են ծծելու յուրաքանչյուր 2—3 ժամը մեկ անգամ:

13. Ձեռքից կերակրվող հորթերի կաթի քիմիատիճանը պետք է լինի 35—38 աստիճանի:

14. Հորթերին խիժ կաթով կերակրելը չսահմանափակել և տալ որակաւն մի քանի անգամ, 4—5 ժամ ընդմիջումներով:

15. Բոլոր նորածին հորթերին մինչև մեկ ամսական հասակն ապահովել դնչկալներով:

16. Հորթերին մեկ ամսական հասակից տալ զրացուցիչ կեր, խոացրած (ջարդված վարսակով, գարով կամ կտավհատի քուսպ):

17. Խտացրած կերերի հետ միասին պարտադիր կերպով տալ նաև կավիճ, սովորական աղ
15—20 գրամի չափով:

18. Խոճկուրները 10—15 որական հասակից ստանում են լրացուցիչ հատիկային կեր, իսկ մտրուկներին 3 ամսական հասակից, դառներին 30—40 որական հասակից:

19. Մատղաշների կերակրման բոլոր տեսակի ամանները պետք է լինեն մաքուր և կերակրելուց առաջ պետք է լինի լվացված յեռացված ջրով և չորացված:

20. Կաթնային կերակրման շրջանն անցնելուց հետո, բոլոր տեսակի մատղաշ անասուններն պետք է դրվեն ռացիոնալ կերակրման տակ, նրանց նորմալ աճը և զարգացումն ապահովելու համար:

21. Մատղաշները միշտ պետք է ապահովված լինեն մաքուր և չոր ցամաքորով և մատղաշ անասունները պահվեն մաքուր և չոր տեղերում:

22. Յուրաքանչյուր 10 որը մեկ անգամ մատղաշ անասունների տեղերն ախտահանել և օպիտակացնել:

4. ԶՈՒԳԱԿՈՐՈՒՄ ՅԵՎ ՄԵՏԻՋԱՑԻԱՆ

1. Հաշվի առնել ըստ գեներացիայի բոլոր տեսակի ցեղական արտադրողներին և կատարել

զուգավորման յենթակա մայր կցումն այն հաշվով, վորպեսզի ապահովի պետական առաջադրանքի կատարումը (պլան):

2. Զուգավորման կամպանիայի նախորդակին բոլոր տեսակի արտադրողներին ստուգել ընդլայնվող և սուբերկուլյոզ հիվանդությունների նկատմամբ: Բրուցելյոզով կամ սուբերկուլյոզով հիվանդ տեղական արտադրողներին հանձնել մասմթերման կամ ամորգատել, իսկ ցեղականներին ոգտագործել միմիայն նույնսանման հիվանդ անասունների համար:

3. Բոլոր տեսակի արտադրողների սերմը պարտադիր կարգով ստուգել և ցածր վորակի սերմ տվող արտադրողների նկատմամբ ուժեղացնել կեղակրումն ու խնամքը. զուգավորման համար միմիայն ոգտագործել բարձր վորակի սերմ տվող արտադրողներին: Ոգտագործման թույլատրված թվոր ցուկերի նկատմամբ պետք է լինեն համապատասխան ակտեր:

4. Յուրաքանչյուր արտադրողի համար սահմանել հետևյալ բեռնվածությունը:

ա) Յուկիկին 50—70 գլուխ (ձեռնաքաշ):

բ) Հովատակին 35—40 գլուխ »

գ) Խոյին 30—40 գլուխ (ձեռնաքաշ):

դ) Վարազին 15—25 »

Մանրուբյուճ. — Յերիտասարդ արտադրող



ներին աշխատանքի առաջի տարին
ընդունվածությունն սահմանել 50 տոկոսի
չափով:

5. Կոլտնտեսության վարչությունը պար-
տավոր է կոլտնտեսականների անհատական ոգ-
տագործման տակ զտնված անասուններին ապա-
հովել արտադրողներով:

6. Տոհմային արտադրողների բաշխումը և
ոգտագործումը կատարել կոլտնտեսություններում
համաձայն անասունների ցեղական շրջանայման:

7. Զուգավորման համար սահմանել հետևյալ
հասակից՝ ցուլիկներին 2 տարեկանից բարձր, յե-
քինջներին 20 ամսականից 2 տարեկան, հովա-
տակներին և զամբիկներին 3 տարեկանից, վա-
րաղներին 9 ամսականից և խոյերին ու շիշակ-
ներին 1,5 տարեկանից:

8. Բոլոր տեսակի արտադրողներին անհրա-
ժեշտ է ապահովել խտացրած, լավորակ կուպիտ-
կերով, իսկ զուգավորման կամ զանախայից 1,5—2
ամիս առաջ ուժեղացնել նրանց կերակրումը:

9. Սեռական հասունություն ունեցող յե-
քինջները և եզ հորթերը պետք է կցվեն կովերի
նախրին, վորպեսզի ապահովվի նրանց ժամանա-
կին զուգավորումը:

5. ՄՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Մրհեստական սերմնավորման կայանները
պետք է կառուցել վարակիչ հիվանդություննե-

քից զերծ տնտեսություններում, վորոնք կապա-
հովեն կայանի բեռնվածությունը, կովերի համա-
վոչ պակաս քան 200 գլխից, իսկ մանր յեղջու-
քավոր անասունները 1500 գլխից, կայաններում
պետք է սերմնավորվեն թե կոլտնտեսության և
թե կոլտնտեսականների ու մենատնտեսների ա-
նասունները:

Մանրաբայր Գ. Բրուցելյոզով և տուբերկուբ-
յոզով վարակված տնտեսություններում թույլա-
տրվում է բանալ սերմնավորման կայան այն պա-
մանով, վոր հիշյալ հիվանդություններով հիվանդ
անասունները սերմնավորվեն առողջ արտադրող-
ների սերմով:

Վերջինը պետք է ձեվակերպվի համապա-
տասխան ակտով շրջանային անասնաբուժի ան-
միջական մասնակցությամբ: Կովերի արհեստա-
կան սերմնավորման կայանում պետք է աշխատեն
յերրորդ զենեբացիայից վոչ պակաս արտադրող-
ներ, վորոնք անալայման պետք է զբաղված լե-
նեն պետական տոհմային գրքում: Վոչխարներ
սերմնավորումը պետք է կատարել զտարյուն
խոյերով:

6. ԱՐՈՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

1. Անասունների խմբավորումը և բրիգադ-
ների կազմը արոտային շրջանին անցնելիս թույլ

նըվում և հոտերի կոմպլեկտավորման նույն սկզբ-
բունքով, ինչպես կազմված և չեղել մասերային
ըջանում:

2. Զոտեխնիկի և անասնաբուժի անմիջա-
կան մասնակցութեամբ կոտնտվարչութեանը նախ-
քան անասունների արոտային ըջանին՝ անցնելը
կատարում և արոտների բաշխում, ըստ անասուն-
ների տեսակների, խմբերի և բրիգադների:

3. Յուրաքանչյուր բրիգադին հատկացված
արոտավայրի ռացիոնալ ուղտագործման համար,
իր հերթին բաժանվում և առանձին սառնաների,
հերթականորեն արածացնելու նպատակով, այն
հաշվով, վոր յուրաքանչյուր արոտամասում ավյալ
բրիգադի անասունները միան 10 որից վոչ ավել:

4. Կատեգորիկ կերպով արգելի վաղ գար-
նան արածացնել ցեխոտ խոտհարքներում:

5. Շոգ յեղանակներին կեսօրվա պահին
անասուններին սալ հանգիստ, ուժեղացնել գի-
շերվա արածացնելը, կանոնավորել ջրկատեղիքը
և կարգի բերել ջրկատեղ տանող ճանապարհնե-
րը, խստիվ արգելի ճահճացած և չհոտող ջրերով
անասուններին ջրել:

6. Նախքան անասունների արոտային ըջը-
ջանին անցնելը, բոլոր արոտները յենթարկվում
են ստուգման, մաքրվում են դիակներից, թափ-
վելով զվազորներից և կեղտից, ցատարվում և

ջրատեղերի մաքրումը և սահմանվում և հատուկ
հսկողութուն արոտավայրերի և ջրկատեղերի
վրա:

7. Վարակիչ հիվանդութուն ունեցող անա-
սունների համար առանձնացնել հատուկ արոտա-
մաս, առանձին ջրկատեղով, այն հաշվով, վոր
պեղի հիվանդ անասունները չանցնեն առողջ
անասունների արոտամասերը և նրանց հետ
շփում չունենան:

8. Արոտային ըջանին անցնելուց մոտ մեկ
ամիս առաջ պետք և հովիվներին ծանոթացնել
անասունների արոտային ըջանի, հիվանդու-
թյունների առաջին ոգնության, փաստվար ու-
թունավոր խոտերի, արոտների ուղտագործման
տեխնիկայի և այլի հետ:

9. Նախքան անասուններին արոտ թողնելը
անհրաժեշտ է՝ ա) վողջ անասուններին յենթար-
կել զոռանառարոժական քննության:

բ) Բոլոր հիվանդ և կասկածելի անասուն-
ներին առանձնացնել մեկուսարանում կամ հա-
տուկ առանձնացրած արոտամասերում:

գ) Ձմեռվա ընթացքում անասունների ա-
ճած սմբակները, պճղակները և յեղջուրների սուր
ձայրերը կտրել և մաքրել:

ե) Մաշկել բոլոր խոշոր յեղջուրավոր ան-
ասունները մաշկային բոռից:

10. Առանց անասնաբուժի վկայականի վոչ մի անասուն չըջանից դուրս, ուրիշ վայր տանելը չի թույլատրվում, չի թույլատրվում անասուններին արածացնել բնական ճանապարհների, անասնադերձանոցների, ինչպես և անասնաբուժախան պետությունից կողմից անապահով հայտաբացված վայրերում:

12. Քոչվորական և անասունների տեղափոխման շրջանում նախքան անասունների նորարոտավայրեր տեղափոխելը կատարվում է անասունների անասնաբուժական ստուգում և մքշակում:

13. Կենդանիներին ճիճվային հիվանդություններից զերծ պահելու համար, ճայճային արտաենն անհրաժեշտ և չորացնել առուներ փորելու միջոցով:

14. Վոչխարների թոքային ճիճուներով վաքակված շրջաններում անհրաժեշտ է սահմանել արտաենների խիտ հերթականություն:

Յուրաքանչյուր արոտամասում վոչխարներին պետք է արածացնել 5—6 որից վոչ ավելի: Խակ նրանց նույն արոտամասում կարելի չէ արածացնել 3 ամսից վոչ շուտ, նույն արոտամասում այդ տեսակին արածացնել թույլատրվում է:

15. Գարնանային և ամառային շրջաններում անասունների տիգերը և բոռի թրթուռները հա-

վաքել և վոչնչացնել, ամառը ցերեկվա կթի ժամանակ սիւտեմատիկաբար սաւաքման յենթարկել և նրանցից վիրավորներին (վորգ առաջացածներին) ջոկելու և բուժելու համար:

7 ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Անասուններին ոգտագործումից ընդունելիս անասնապահը պարտավոր է մանրամասն զննել կենդանիներին վորեն տրորվածք, հարված կամ այլ հիվանդություններ և պակասություններ նկատելու զեպքում անմիջապես զեկուցել այդ առթիվ բրկագիրին, համապատասան միջոցներ ձեռք առնելու համար:

2. Աշխատող անասուններին պետք է տալ 6 որվա ընթացքում մեկ որ հանդիստ, խակ ճիմահական դյուղատնտեսական աշխատանքները սկսելուց տալ տեղակա հանգիստ 10—15 որ, թույլ և հյուժված կենդանիներին տալ հանգիստ մինչև նրանց լրիվ կադդուրվելը:

3. Ամրոզ դուղավորման կամ պանիաչի նախապատրաստման և նրա անցկացման ընթացքում արգելվում է ալտագրող հովատակներին ոգտագործել:

4. Զխապահների և անասնապահների աշխատանքի պատասխանատվությունը ավելի խոքացնելու համար աշխատանքի սեզոնի վերջում

անասուններն ընդունել անասնապահներինց հա-
տուել ախտով— թե ինչ վիճակումն են գտնվում
առկալ անասունները:

8. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԶՈՈԶԱՇՎԱՌՔԸ ՅԵՎ ՀՄՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Աշխատանքի լավ կազմակերպման և զո-
տախնդիրական հաշվառումը լավ հիմքի վրա դը-
նելու համար բոլոր կոլտնտապրանքային ֆեր-
մաններում պարտադիր կերպով ունենալ հետևյալ
հաշվառման ձևերը՝

ա) ծնի և զուգավորման մատյան.

բ) ամենօրյա կթի գրանցման մատյան.

գ) մատղաշների աճեցման մատյան (հորթե-
քի նկատմամբ սկզբնական կենդանի քաշը և ա-
պա ամիսը մեկ անգամ, իսկ գառներին սկզբնա-
կան կենդանի քաշը և ապա 3 ամիս մեկ անգամ).

դ) մայրերի գիրք և արտադրական քարտեր.

յե) ցեղական վոչխարների անհատական
քրդատվություն:

2. Գրանցումների ստուգումը և ցուցմունք-
ների տալը կատարվում է զոռպերսոնալի կող-
մից:

3. Խոշոր ֆերմաներում, վորտեզ ֆերմայի
ալայինը հնարավորություն չունի գրանցումները
կատարելու, և ևս լիարժեք վարչություն կողմից նշա-

նակվում է հատուկ հաշվառներ— անասնապա-
հական քրիզագիրներ:

4. Յուրաքանչյուր ծինը, անկումը, վիժու-
մը, խոտանումը և վաճառումը պետք է ձևա-
կերպվի համապատասխան անձնավորություննե-
րի կողմից:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՍՈՑՄԵԹՈՂՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

1. Աշխատանքի կազմակերպումը կոլտնտֆեր-
մաններում անցկացնել համաձայն գոյություն ու-
նեցող աշխատանքի կազմակերպման հրահանգի:

2. Լայն ծավալելով սոցմրցումը, հարվածաչ-
նությունը և ստախանովական մեթոդների կի-
բառումը արտադրություն մեջ, առաջավորների
փորձերը դարձնել կոլտնտֆերմաների անասնա-
պահների սեփականություն:

3. Անասնապահության բնագավառում աշ-
խատողներին վորակավորելու և նրանց ախնի-
կական մակարդակը բարձրացնելու համար կազ-
մակերպել զոռխմբակներ, արտադրության մեջ
կիրառել զոռանասնաբուժական միջոցառումներ,
ստուգել աշխատանքի աշխուրների ձիշտ հաշվա-
ռումը և նրանց ժամանակին գրանցումները
գրքույկներում:

10. ԶՈՐԱՆԱՍՆԱԲԱԺԱՎԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ԿՈՆՏՐՈԼԸ ՅԵՎ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն կանոնների կիրառման պատասխանատվությունը կողմողներում դրվում է կողմողնախազահների, ֆերմայի վարիչների վրա, իսկ կողմնոտեսականների և մենատնտեսների առտուներին նկատմամբ պատասխանատվությունը դրվում է գյուղխորհրդի նախագահների և անասնատերերի վրա:

2. Սույն կանոնները կիրառման ղեկավարությունը և հսկողությունը դրվում է հողբաժնի անասնաբուժական և զոոտեխնիկական անձնակազմի վրա:

3. Յուրաքանչյուր անասնապահական կողմնոտեսություն պետք է ունենա զոովետաբուժնալի այցելության գիրք անասնագոմբում փակցված, վորտեղ պետք է գրանցվի զիտողությունների անասնապահության դրույթյան մասին զոոանասնաբուժական կանոնների կիրառման անհրաժեշտ միջոցառումների և վերջիներին կատարման վերաբերյալ նշումները:

Սույն կանոնները չկատարելու համար մեղավորները յենթարկվում են վարչական առաջիկա պարզով առաջաքի մինչև 100 ո., իսկ վորոշ

գեպքում, վորպես որենքը խախտողների կանգնում են քրեական պատասխանատվության:

11. ԿՈԼԻՈՉ ՑԵՐՄԱՆԵՐՈՒՄ ՎՈՐԱԿՈՎ ԿԱՅՍՏԱՆԱԼՈՒ ՅԵՎ ԲԱՐՁՐ ՎՈՐԱԿ ԿԱՅՆԱՍԹԵՐՔՆԵՐ ՎԵՐԱՄՇԱԿԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Կովերի կիթը կատարել կերակրելու յիրկու ժամ հետո, վորպեսզի գոմբում կիթ ժամանակ փոշի չլինի, կիթը սկսելուց առաջ կաթնամանները լվանալ յեռացրած ջրով, կրկին մաքուր ջրով վողողել. կիթողները կիթից առաջ առավոր են ձեռքերը ոճառով մաքուր լվանալ և աշխատանքի անցնել մաքուր խալաթներով:

2. Կիթից առաջ կովի կուրծը և նրա շրջապատը ձեռքով շփել փոշուց մաքրելու համար ապա կուրծը լվանալ մաքուր գոլ ջրով, չորացնել մաքուր սրբիչով, կիթի սկզբում կաթի առաջին շիթ շիթը առանձին կիթել:

3. Յուրաքանչյուր կովն առանձին կիթել. կիթից հետո կաթը կշռել կամ չափել և ապա կաթը քամել ֆլյազանների մեջ, առանձին տամաններով մաքուր ջուր ունենալ և ամեն անգամ կաթը քամը կեղտոտելիս լվանալ և ոգաադործել:

4. Կիթի ընթացքում հետևել կովի կրծի առողջության և կաթի վորակին, կիթելուց կաթի մեջ արյան հետքեր կամ աննորմալ դաշինք

նկատելիս (վորը հատուկ չե առողջ կաթին) կա-
թը առանձին պահել կամ խառնել ընդհանուր
կաթին, ամանը մաքուր լվանալ և անպա ոգոտ-
գործել մնացած կովերի կթին:

5. Նոր ծնած կովի կաթը, ծնելուց 6—8 օր
հետո միայն կառնել ընդհանուր կաթին. բոլոր
կասկածելի և հիվանդոտ կաթերը առանձին ա-
մաններով ուղարկել գործարան և առանձին հաշ-
վի առնել, իսկ վերամշակման ժամանակ ստրելի-
զացիայի յենթարկել և ուղա վերամշակել:

6. Կթի անասունների կաթանավորթյունը
և կաթի յուղի ասիլսը բարձրացնելու նպատա-
կով, կթի ընթացքում մասսաժ անել և կիթն ա-
քաղ կատարել:

7. Կիթը վերջանալուց հետո, կաթի ֆլյազա-
ներն անմիջապես փոխադրել գործարան կշեռել և
հանձնել վերամշակման:

8. Ֆերմաներից ստացված բոլոր տեսակի
հիվանդ կաթերը (բրյուցելյոզ և աուբերկուլյոզ)
վերամշակումից առաջ նախորոք յենթարկել
ստրելիզացիայի տաքացնել 80 աստիճանի
ցելսուսով:

9. Կաթնագործարանները և մեքենաները
պետք է պահել օտրք վիճակում և ամեն անգամ
յուղած վիճակում:

10. Ամեն օր աշխատանքի սկզբին վարպետն

առաջում և պահեստում յեղած կաթնամթերքի
պայմանները և միջոցներ և ձեռք առնում կա-
նոնավորելու պահեստների խոնավությունը և
ջերմության աստիճանը:

11. Կաթնամթերքների քաշը և հաշվառու-
մը կատարել արտադրությունից անմիջապես հե-
տո և առանձին հաշվի առնել յուրաքանչյուր
տեսակ կաթնամթերքի վրա ծախսված անարատ
և զտված կաթի քանակը:

12. Կաթնամթերքների փոխադրումը կա-
տարել ստանդարտով նախատեսված համապա-
մասխան տոբաներով (արկղ կամ տակառներ):

13. Նախքան կաթի վերամշակման սեզոնի
սկսելը.

ա) վերանորոգել և սպիտակացնել պանրա-
գործարանի շենքը, մօքրել և վերանորոգել պա-
հեստները, ավազանները և գործարանի կանալ-
ները:

բ) Գործարանի ունեցած մեքենաների և
գործիքների մաշված մասերը փոխարինել նորե-
րով, կաթնամասերը կլայկել, գործածությու-
նից հանված մեքենաների և գործիքների փոխա-
րեն նորերը ձեռք բերել:

գ) Ապահովել կաթնամթերքների արտա-
դրությունն անհրաժեշտ արտադրական նյութերով
ինչպիսիս և պանրի մակարտը, պանրի տոնրա-

Վաղուհ (սերպալանկա). մարլա, աղ, սերզատի յուղ
և այլն, կարագի և պանրի տարաների ձեռք բե-
քումը:

դ) Գործարանի շենք չունեցող ֆերմաներում
համապատասխան շենք հարմարեցնել և կատարել
անհրաժեշտ նորոգումներ մինչև սեզոնի սկսվելը:

14. Վերամշակվող կաթնամթերքների վո-
քալն ապահովելու նպատակով բոլոր գործարան-
ներում պաշտպանել անհրաժեշտ մաքրություն և
աշխատանքները կատարել մաքուր արտահագուս-
տով, իսկ ձեռքերը լվանալ ոճառով:

15. Աշխատանքի ընդունելուց և հետագա-
յում յուրաքանչյուր գործարանի ամբողջ պերսո-
նալը պետք է յենթարկվի բժշկական քննության:

16. Կաթնամանները լվանալ մանրակրկիտ
ֆերպով, սկզբում վողոդել տաք ջրով և ապա լը-
վանալ խոզանակով 50° աստիճան ջերմություն
ունեցող մոխրաջրով կամ 0,5—1 տոկոսանի սո-
դայի լուծույթով, վորից հետո վողոդել յեռացրած
ջրով:

17. Ամանները լվանալուց հետո, դարսել ա-
պանձին սեղանի վրա չորանալու և մաքուր մնա-

լու համար, իսկ ամառային ամիսներին՝ չորաց-
նել արևի տակ:

18. աման անգամ աշխատանքից հետո մաք-
րել գործարանի հատակը, մաքրել մեքենաների
պատվանդանները և կանալիզացիայի անցքերի
սկիզբը քսել թաքմ կրի լուծույթով:

10. Գործարանի պատերը և առաստաղը
յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ գիդենֆեկցիա-
յի յենթարկել և սպիտակացնել, սպիտակացումը
կատարել հանգած կրի տաք լուծույթով:

20. Առանձնապես վոչխարների կթի ըն-
թացքում կաթի մաքրությունն ապահովելու նը-
պատակով վոչխարների դմակի չորացած կզկանք-
ները մաքրել և կթելիս անմիջապես առաջ դա-
կը շարժել (թափ տալ) կզկանքների մնացորդ-
ները հեռացնելու համար:

21. Յայլաղներում կազմակերպել կաթի վե-
րամշակման աշխատանքները, ապահովելով հա-
մապատասխան քանակի կաթի կաթնախմեխա-
րով, արտադրական նյութերով:

22. Կաթը գոմաղբի հոսից և կեղտոտու-
թյունից զերծ պահելու նպատակով, գոմերի մի-

Չանցքում կամ դռան մոտ պատրաստել կաթի
հավաքման տեղ—կթի ընթացքում կաթը հալո-
քելու համար:

23. կաթը թթվելուց պաշտպանելու նպա-
տակով, ամառվա ընթացքում կթված կաթը նախ-
քան գործարան փոխադրելը հավաքել ֆլյակա-
ներում հատուկ ծածկի տակ:

Շրջանային գործադիր կոմիտեյի
նախագահ՝ Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Քարտուղար՝ Շ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ



ՀՀ Ազգային գրադարան



NL0286735

21.445